«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Ասատրյան

Ուսումնական հաստատություն՝ Նոր Խարբերդի Մ. Ղազարյանի անվան համար 2 միջնակարգ դպրոց

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐ 4
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 6
ՄԱՅՐԵՆԻԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ.. 8
ՄԱՅՐԵՆԻ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ 9
ԴԱՍԻ ՊԼԱՆ 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում դրվում են մարդու կրթության ու դաստիարակության, բոլոր գիտելիքների ու կարողությունների հիմքերը: Այս շրջանում է, որ երեխաները նախապատրաստվում են գիտությունների համակարգված դասընթացների ուսումնասիրությանը, որը հիմնականում իրականացվում է մայրենի լեզվի շնորհիվ:

Մայրենի լեզուն իր մեջ ամփոփում է բոլոր գիտելիքներն ու տեղեկությունները: Մենք պատրաստում ենք վաղվա մարդ-քաղաքացիներ: Եվ հենց մայրենիի դասերի միջոցով են երեխաները ստանալու մասնագիտական կողմնորոշում, գեղագիտական և բարոյական դաստիարակություն, նրանք ստանալու են կյանքին նախապատրաստվելու լայն հնարավորություններ:

Դասը հետաքրքիր, աշխույժ ու բովանդակալից դարձնելու նպատակով ուսուցիչը դիմում է միջառարկայական կապերի օգտագործմանը: Բազմակողմանի զարգացած անձնավորության համար կարևոր նշանակություն ունեն տարբեր գիտություններ, երևույթների միջև գոյություն ունեցող կապերի ճանաչումը, դրանց համադրումն ու օգտագործումը:

Ինտեգրված դասը սովորաբար նախապես պլանավորվում է: Դա շատ անհրաժեշտ է և լիովին համապատասխանում է ուսումնական ծրագրին: Հաճախ դրանք դասեր են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման:

Նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով: Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Բայց քանի որ աշխատում է երկու դասավանդող, նույնիսկ, եթե ինչ-որ պահի առաջատար դեր խաղացել է նրանցից մեկը, երկրորդը չպետք է նստի ստվերում. նա ևս պետք է ակտիվ լինի՝ վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը:

Առարկայական ինտեգրումը դասի նպատակին հասնելու հուսալի միջոց է: Այն նպաստում է նոր նյութի խորքային յուրացմանը, անցածի և անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերված նոր գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու կիրառմանը:

Դասի ընթացքում միջառարկայական կապերն օգտագործվում են խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլում:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐ

«Ինտեգրում» բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ գագաթը՝ նպատակային դասը: Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում:

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը:Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ:

Ինտեգրացված դասը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործական միտքը, հետազոտական աշխատանքը:

Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործող ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն է ստեղծվում:

Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Իհարկե, ինտեգրված դասերը բազմակողմակի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Ես՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի, արդեն բավականին երկար եմ կիրառում այս աշխատանքի ձևը և կարող եմ վստահ ասել, որ բավականին լավ արդյունք եմ ստանում: Վերջերս տեխնոլոգիայի ուսուցչուհու հետ անցկացրած ինտեգրված դասը տվեց գեղագիտական մեծ ինքնաբավություն և երեխաների մոտ զարգացրեց ճաշակ ու ինքնուրույնության ձգտում:

Ես գտնում եմ, որ ինտեգրված դասը ոչ միայն արդյունավետ է աշակերտների համար, այն ուսուցիչներին մղում է ինքնակատարելագործման, ուսուցիչները ձեռք են բերում նոր հմտություններ, զարգացնում թիմում աշխատելու կարողություններ և ձևավորում միջանձնային ջերմ հարաբերություններ: Մանկավարժի գործունեությունը այնպիսին է, որ առանց ինտեգրված դասի անցկացման էլ, նա սովորում է և կատարելագործվում է իր ամենօրյա աշխատանքային գործունեության ընթացքում: Կրթությունը շարունակական գործընթաց է, յուրաքանչյուրս էլ սովորում ենք մեր կյանքի ընթացքում, պարտադիր չէ դասավանդես, որ նորանոր գիտելիքների տիրապետես: Խոսքս վերաբերում է բոլոր բնագավառներին: Ինտեգրված դասը սոսկ միջոց է, ու, համաձայն եմ ձեզ հետ, շատ արդյունավետ միջոց, բազմաթիվ միջոցներից մեկը:

Ինեգրված դասը այն գեղեցիկ հնարավորություններից է, որ կապում է տարաբնույթ առարկաների ուսուցիչներին և աշակերտներին մեկ նպատակի շուրջ, այն է՝ ուսուցման արդյունավետության, գիտելիքների հարստացման և ստեղծագործական ունակությունների զարգացման:

Մայրենի առարկան հատկապես շատ հարմար է ինտեգրված դասեր կատարելու համար:Գրեթե յուրաքանչյուր դաս կարելի է կապել՝տեխնոլոգիայի, մաթեմատիկայի, երաժշտության, ես և շրջակա աշխարհի և կերպարվեստի հետ: Որքան ուսուցիչը բանիմաց է ու բազմակողմանի զարգացած, այնքան մեծ է նրա նախապատրաստած դասի ամբողջական ու հագեցած լինելու հնարավորությունը:

Ես գտնում եմ, որ ինտեգրված դասերը մեծ չափով պետք է ներդրվեն ուսումնական գործընթացում, որովհետև ավելի տարողունակ ու բովանդակալից են դարձնում դասապրոցեսը: Իրոք, այսօր ինտեգրված դասերը դարձել են օրվա հրամայականը: Աշակերտները նույնպես շատ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նման դասերի նկատմամբ: Իսկ ուսուցչի նպատակը հետաքրքրություն առաջացնելն է ուսման նկատմամբ, որը կտանի դեպի որակյալ կրթություն: Իհարկե, ուզում եմ նշել նաև, որ նման դասեր անցկացնելու համար պետք է շատ լավ պատրաստվել, շատ ժամանակ ծախսել: Բայց համոզված լինելով, որ այն իսկապես կտա իր դրական արդյունքը, աշխատանքը դառնում է հետաքրքիր ու հաճելի:

Առարկան շատ հետաքրքիր է դառնում այն ժամանակ, երբ տեսնում են կյանքում նրա կիրառելիությունը,կարևորությունը և անհրաժեշտությունը:Ինտեգրված դասը հենց այդպիսի նպատակների համար պիտի ծառայի: Երեխաները այդ դասերից ստացած գիտելիքները սիրով պետք է կյանք տանեն:

Տարիներ շարունակ դասավանդելով հիմնական դպրոցում՝ հասկացա, որ սովորողը հակված չէ տանը իր հետաքրքրությունները մի կողմ դնելու և զբաղվելու տնային առաջադրանք կատարելով, մանավանդ, որ ուսուցիչը չի հասցնում յուրաքանչյուր հանձնարարություն անհատապես ստուգել: Միևնույն ժամանակ, որպես կանոն, բարեխիղճ սովորողը պարտաճանաչ կատարում է տնային առաջադրանքը՝ սահմանափակվելով միայն տեքստը արտագրելով, առաջադրանքը թերի կատարելով: Նման աշխատանքը գիտելիքներ չի ավելացնում, և ես դեմ եմ տնային առաջադրանք հանձնարարելուն: Դրա փոխարեն դպրոցում ճիշտ կազմակերպված դասը հանգեցնում է այն բանին, որ սովորողը տանը ինքնուրույն նման աշխատանքներ կատարի, զբաղվի ինքնակրթությամբ, որը միշտ էլ հմտացնում է:

Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մի կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Տարրական դպրոցում լեզվական քերականական գիտելիքների ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով: Գիտական սահմանումներ տրվում են այն չափով, որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների ու եզրակացությունների: Ուսուցիչն օգնում է նրանց՝ եզրույթների ճանաչման և խոսքի մեջ դրանց կիրառման օրինաչափությունների գործում: Լեզվի գործնական ուսուցումը կատարվում է ընթերցանության համար նախատեսված՝ բարբառայնությունից զուրկ, գրական բարձր հայերենով բնագրերի հենքով, որոնք իրենց մեջ պարունակում են անհրաժեշտ քերականական նյութի օրինակներ: Ուսուցիչը չպետք է անտեսի այն հանգամանքը, որ մեր օրերում աշակերտ-

գեղարվեստական գիրք կապի խզման (կամ նվազագույնի հասնելու) ցավալի երևույթի պատճառով զգալի անջրպետ է գոյացել գրական և խոսակցական լեզվի միջև: Աշակերտները չեն տիրապետում քերականորեն ճիշտ խոսք կառուցելու պահանջներին: Նրանց խոսքի մեջ իշխող է դարձել ժարգոնային, բարբառային, օտարաբան բառերի օգտագործումը: Այս առումով էլ, սկսած տարրական դասարաններից, իրականացվում է լեզվի գործնական ուսուցումը: Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը: Բնագրի մեջ միշտ դրսևորվում են լեզվական տարրերն ու մակարդակները, քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոնք փոխադարձ կապերի մեջ են երևում:

Այսինքն՝ կազմակերպվում է ինտեգրված ուսուցում, որի ընթացքում միջառարկայական կապերի հանգույցում հանդես են գալիս միմյանց հետ սերտորեն կապակցված երկու առարկաներ՝ հայոց լեզու և գրական ընթերցանություն:

Ինտեգրված բոլոր դասերի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Գիտելիքներից բացի սովորողի մեջ անհրաժեշտ է զարգացնել դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ, ընդգրկել նրան ճանաչողական գործունեության մեջ և ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ ծնող, աշակերտ տեղեկատվական գիրք, աշակերտ ուսուցիչ, աշակերտ աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը: Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ տեխնոլոգիայից, մաթեմատիկայից, երաժշտությունից ու կերպարվեստից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտեների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով:

Ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը:

Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և, այսպես կոչված, ինտեգրացված դասերը: Այժմ էլ ինչպես տարրական դասարաններում, այնպես էլ բարձր դասարաններում կազմակերպվում են ինտեգրացված դասեր՝ նվիրված կոնկրետ որևէ տարողունակ-համալիր ընտրովի թեմայի ուսումնասիրմանը: Թեմաների համալիր ուսումնասիրումը հնարավոր է միայն միջառարկայական կապեր իրականացնող ինտեգրացված դասերին: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և հահակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

ՄԱՅՐԵՆԻԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Որպես ուսումնական առարկա, մայրենին ունի այնպիսի հզոր ազդեցության միջոց անձի վրա, ինչպիսին գիրքն է: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունը, ժամանակակից հասարակությանը պետք է մարդ, որը կարողանում է գտնել նոր գիտելիքներ և կիրառել տարբեր գործունեությունների ժամանակ: Պատահական չէ, որ կրթված մարդը պետք է կարողանա աշխատել ինֆորմացիայի հետ: Մեծն մանկավարժ Ուշինսկին ասել է. <<Կարողանալ կարդալը բառի լայն իմաստով նշանակում է մեռած տառից կենդանի իմաստ հանել: Կարդալ, դեռ ոչինչ չի նշանակում, ի՞նչ կարդալ և ո՞նց հասկանալ կարդացածը, դա է գլխավորը>>:

Ոչ մեկին սերը դեպի կարդալը ի ծնե չի տրվել:

- Ի՞նչու են շատ երեխաներ դժկամությամբ կարդում:

- Ինչո՞ւ է տարեցտարի պակասում մեր երեխաների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Գոյություն ունեն անկման տարբեր պատճառներ.

1. Մասայական ինֆորմացիայի միջոցների ազդեցության ուժեղացումը: Գրքի ընթերցանությունը փոխարինվում է հեռուստացույցի և համակարգչի առջև երկարաժամկետ նստելով:
2. Հասարակական կյանքի կտրուկ փոփոխությունը, երբ անապահով ընտանիքների երեխաների ծնողները շահագրգռված չեն իրենց երեխաների կրթությամբ և դաստիարակությամբ:
3. Աշակերտների ընթերցանության նպատակային ձևավորման սիստեմի բացակայությունը:

Մայրենիի դասագրքերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում բնության, հայ ժողովրդի պատմության, ազգային սովորությունների, մշակույթի մասին, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ, զարգանում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը, ձևավորվում է լեզվամտածողությունը: Մայրենիի դասերի ժամանակ ուսումնասիրվող ստեղծագործությունների միջոցով երեխաները ոչ միայն մայրենի լեզվով կարողանում են կարդալ և պատմել են սովորում, այլև զարգանում են ընթերցած ստեղծագործությունը հասկանալու, կերպարների և գործող անձանց գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, վերլուծություններ կատարելու նրանց կարողությունները:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում հիմնականում զետեղված են պատմվածքներ, որոնք վերաբերում են երեխաների կյանքին կամ նրանց հետաքրքրող թեմաներին:

ՄԱՅՐԵՆԻ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ

Դպրոցում ճիշտ կազմակերպված ինտեգրված դասը հանգեցնում է այն բանին, որ սովորողը տանը ինքնուրույն նման աշխատանքներ կատարի, զբաղվի ինքնակրթությամբ:

Ես ուզում եմ ներկայացնել ինտեգրված մի դաս, որն իրականցնելու համար պահանջվում է նախապատրաստական լուրջ ջանքեր, և փորձը ցույց տվեց, որ այդպիսի դասի արդյունավետությունը բարձր է: Հիմանականում 3 փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45 րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Այդ դասը հզոր խթան հանդիսացավ սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսեցին վերլուծել, համեմատել, որոնել երևույթների միջև եղած կապը:

Ընտրված թեմատիկ միավորի նյութը բխում է բոլոր աշակերտների հետաքրքրություններից: Փոքր երեխաներն իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում աշխատելով գլուխ հանել իրենց շրջապատող աշխարհից: Բնական հետաքրքրասիրությունից բխած՝ նրանք հարցեր են տալիս և հետազոտում: Մեր առաջնակարգ խնդիրներից մեկը աշակերտի բնական հետաքրքրասիրության հիմքի վրա նոր գիտելիքներ կառուցելն է:

Թեմատիկ միավորի իրականացումով աշակերտները կսովորեն գտնել, արժևորել, համադրել և օգտագործել տեղեկատվության տարբեր տեսակները; Մենք համոզված ենք, որ անցկացվելիք դասերը երեխաները կսովորեն հաճույքով, նրանց յուրացրած գիտելիքը կլինի կայուն ու չի մոռացվի:

Մայրենի-տեխնոլոգիա-մաթեմատիկա ինտեգրված դասի ուսուցումը տանում է դեպի հին աշխարհի խորքերը և նպաստում է աշակերտներին՝ կրթելու և ձևավորելու հասարակության ու պետության շահերին նպաստող անհրաժեշտ գիտելիքներով, ունակություններով և հմտություններով, որպես աշխատասեր, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ:

Տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացնող կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մայրենիից, մաթեմատիկայից և այլ հանրակրթական առարկաներից, ցույց է տալիս դրանց օգտագործումը մարդու տարատեսակ գործունեություններում: <<Տեխնոլոգիան>> ըստ էության գործնական-ուղղորդող ուսուցողական ոլորտ է և ապահովում է սովորողների հաջորդական անցումը ընդհանուրից մասնագիտական կրթությանը:

Ինտեգրված դասի խնդիրը ոչ միայն աշակերտների միտքն ու իմացական կարողությունները զարգացնելն է, այլև աշխատանքի նկատմամբ սեր, հարգանք և ձգտում սերմանելը: Այս նպատակին է ուղղված դասի ընթացքում գործնական աշխատանքների կազմակերպումը, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս իրեն տեսական գիտելիքները գործնականում կիրառել, զարգացնում նրանց կիրառական կարողություններն ու հմտությունները: Այս աշխատանքի ժամանակ է, որ աշակերտը կարողանում է գործնականում կիրառել իր տեսական գիտելիքները՝ դարձնելով դրանք ավելի հիմնավոր և օգտակար, ակնառու տեսնում է ուսումնասիրվող առարկաների և իրական կյանքի կապը: Դասի ընթացքում

իրականացված գործնական աշխատանքները նպաստում են սովորողների կիրառական կարողությունների զարգացմանը՝ դրանք հետագայում վերածելով անհրաժեշտ սոցիալական հմտությունների: Հմտություններ, որոնք օգնում են աշակերտին ինքնահաստատվելու և իրեն հասարակության լիարժեք անդամ զգալու: Մենք պետք է հասնենք նրան, որ աշակերտն առօրյա կյանքում կարողանա իրեն լիարժեք դրսևորել և գնահատել ստացած գիտելիքների իրական արժեքը: Աշակերտները կարողանում են «կարդալ» գծագրերը, կազմել քայլաշարեր, ինքնուրույն (կամ ուսուցչի օգնությամբ) լուծել իրենց առջև ծառացած խնդիրները: Սովորողները շոշափելի ձևով զգում և տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը, բերկրանք են ապրում դրանից: Այստեղ է, որ ձևավորվում է աշակերտի արժեքային համակարգը, սեր առաջանում դեպի աշխատանքը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան- 4րդ (տևողությունը՝ 45 րոպե)

Թեման- Ասք լավաշի մասին

Տիպը- Նոր նյութի հաղորդման և յուրացման դաս

Դասի նպատակը

- Նյութի ուսումնասիրության արդյունքում սովորողները կամրակայեն՝ հասկանալով ընթերցելու, հիմնական միտքը ընկալելու կարողություն:
- Կհարստացնեն բառապաշարը:
- Կծանոթանան լավաշի թխման գործընթացին:
- Կխորացնեն ճանաչողական հետաքրքրությունները, կսովորեն խնայողաբար օգտագործել հացը:

Ուսումնական պարագաներ

- Նկարներ, քարտեր
- Թխման գործընթացի մեջ օգտագործվող անհրաժեշտ պարագաներ:
- Դասի ընթացքը

Մեթոդներ, հնարներ՝

- Մտագրոհ (խթանման փուլում)
- Զույգով ընթերցանություն, բառային զրույցներ (իմաստի ընկալման փուլում)
- Խմբային աշխատանք

Խթանման փուլ

1) Կարդալ հանելուկը

Հողից ծնվեց, մեծացավ,
Մի բարակ ոտք ունեցավ,
Ոտքի ծայրին, գլխի տեղ՝
Մի փունջ ոսկի գնդասեղ

2) Կարդալ բանաստեղծությունը՝ «Հացը»

Հացը մեր կյանքն է ու բարեկամը,
Եվ առավոտ է և արևաշող,
Հացից առավել մենք հացն ենք սիրում
Եվ հայրենիքը մեզ հաց արարող:
Ու թե երդվենք հացով սրբազան
Ու կռվի գնանք ընդդեմ ոսոխի,
Կվերադառնանք շարքով հաղթական՝
Միշտ հավատարիմ երդումին հացի:

- Ինչի՞ մասին է լինելու մեր նոր նյութը:
- Հացի ի՞նչ տեսակներ գիտեք: (Բաղարջ, բոքոն, մատնաքաշ, լավաշ)
- Ո՞վ կարող է ներկայացնել, թե ցորենից ինչպե՞ս են լավաշ ստանում:
- Ի՞նչ պարագաներ է անհրաժեշտ լավաշ ստանալու համար և ինչպիսի՞ն է այն:

Լավաշը առաջին անգամ թխել են հայերը՝ թոնրում: Հիմա թխում են նաև էլեկտրական վառարաններում: Լավաշը հայտնի է դեռ ավելի քան 3000 տարի առաջ: Լավաշն աշխարհի ամենաերկարաժամկետ պահվող հացն է, այն կարելի է պահել ավելի քան մեկ տարի: Լավաշը Հայաստանի խորհրդանիշներից մեկն է: Հարսի ու փեսայի ուսին դնելով՝ առատություն ու օրհնություն են ակնկալում:

Խմորի գունդը գրտնակում, լավ բացում են, ապա ձեռքի հմուտ շարժումներով մի ձեռքից նետում մյուսին՝ լավ քաշելով- բացելով խմորը:

Այստեղից էլ լավքաշ- լավաշ անունը (լավ քաշած): Մի ամբողջ ազգի պատմություն, ցավ և հաղթանակ է ամփոփված լավաշի մեջ:

Մտքերը, գաղափարները գրել գրատախտակին:

Իմաստի ընկալում

Աշխատանք տեքստի շուրջ՝

Զույգով ընթերցանություն

Կարդալ տեքստը և հարցերի միջոցով ամփոփել:

- Ու՞մ հետ էր կռվում հայոց արքա Արամը:
- Ի՞նչ պայման դրեց նրա առջև Նոսորը:
- Բանբերները ի՞նչ էին բերում ամեն օր հայոց արքային:
- Ի՞նչ է պահանջում հայոց արքան իր հրովարտակով:

Պատմել Արամ արքայի մասին:

Մեզ հասած ուրարտական արձանագրություններից տեղեկանում ենք, որ Ք.ա 859թ. Վանա լճի շրջակայքում Արամ արքան հիմնադրում է թագավորություն, որը հայտնի է Ուրարտու կամ Վանի Արարատյան թագավորություն անունով: Այդ ժամանակ ասորիների թագավորը Նոսորն էր (Նաբուգոդոնոսոր):

Բացատրել անծանոթ բառերի իմաստը:

ասք- ժողովրդական զրույց, որի հիմքում ընկած է իրական դեպք

ընծա- նվեր

լանջապանակ- լանջը, կուրծքը պահպանելու զրահ

ճրագալույց- ճրագ վառելը, պայծառ լուսավորություն

բանբեր- լուր բերող, տեղեկություն բերող

սևաթույր- սև գույնի, սևագույն

հյուծվել- նիհարել, հալվել, մաշվել

ապշել- զարմանքից շշմել

դյուցազուն- քաջազուն, հերոս

կայտառ- աշխույժ, զվարթ

դիպուկ- շեշտակի, անվրեպ, անսխալ

հրովարտակ- թագավորի գրավոր դիմումը որևէ իրադարձության առիթով

Բառային զրույցներ

- Կարդալ այն հատվածը, որտեղ կար ապշել բառը:
  Նոսորը, որին թվում էր, թե տասնօրյա քաղցից Արամն արդեն ուժասպառ է եղել, հյուծվել, ապշում է, երբ հայոց դյուցազունը՝ զվարթերես ու կայտառ, դիպուկ արձակում է նետերը և հաղթում:

- Արտասանել այդ բառը՝ *ապշել*
- Բացատրել *ապշել* բառի իմաստը

  ապշել- զարմանքից շշմել
- Կազմել նախադասություն այդ բառով:

  Հայ ժողովուրդը ապշել էր քառօրյա պատերազմում հայ զինվորների կատարած սխրագործություններից:
- Աշակերտները կկազմեն նախադասություններ այդ բառով:
- Արտասանել այդ բառը:
- Բառային պատին գրել այդ բառը:

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել հացաթխման պարագաների վրա (գրտնակ, սեղանտախտակ, օխլավ, լավաշթխի):

Խմբային և գործնական աշխատանք

I խումբ- Նկարները դասավորել ըստ հերթականության:

II խումբ- Որոշել հացի ստացման քայլաշարը՝ ճիշտ հաջորդականությամբ նշելով թվերը:

☐	Խմորը հունցում են:	☐	Արտը հնձում են:
☐	Հացը թխում են:	☐	Սերմը ցանում են:
☐	Ցորենը աղում են:	☐	Արտը ջրում են:

III խումբ- Լուծել խնդիրները

1) 

- 300 գունդ

150 կգ ալյուր - ? գունդ

2) Խանութը ստացավ- 11կգ 600գ ալյուր

   Վաճառեցին- 5կգ 800գ ալյուր

   Մնաց-? Կգ

IV խումբ- Կազմակերպել թխման գործընթացը:

Երգել «Լավաշ ենք թխում» երգը:

Ալյուր ենք մաղում,
Խմոր ենք անում,
Գրտնակի տակ
Արագ-արագ
Գնդերը բացում:
Հանում ենք տաք-տաք,
Լավաշը բարակ,
Մաքուր-սպիտակ
Սփռոցի տակ
Դարսում ենք արագ:
Հետո ձեռքերով,
Ուրախ երգերով,
Հատիկ-հատիկ
Թոնրի պատին
Լավաշ խփում:
Լավաշը կտրում,
Պանիր ենք դնում,
Եկեք, եկեք
Դուք էլ կերեք,
Լավաշ ենք ուտում:

Կշռադատման փուլ

Անդրադարձ կատարել դասի ընթացքին:

Ի՞նչ սովորեցինք:

Ինչի՞ մասին խոսեցինք դասի ընթացքում:

Աշխատանքն ավարտել հետևյալ խոսքերով.

«Նրա քաղցրությունը պայմանավորված է դարեր շարունակ այս քարքարոտ հողից արդար վաստակով հաց քամելու դժվարության հետ, ինչպես ասում են՝ քարից հաց են քամում»:

«Կախարդական լավաշի խորհուրդը գալիս է դարերի խորքից՝ մեր պապիկների ու տատիկների խրատներից, ու մեզ սովորեցնում, որ երջանկությունը աշխատանքի մեջ է»:

«Մեր լավաշ հացը մեր պարզությունն է,
Որ բաց ենք անում ամենքի առաջ,
Մեր լավաշ հացը մեր պատմությունն է,
Կրակի բոցում թրծված ու հառնած:
Մեր լավաշ հացը մեր տրտմությունն է,
Համբերությունն է մեր կարկտահար:
Մեր լավաշ հացը մեր էությունն է,
Մեր Հաց-Հավատը՝ աղոթք ու նշխար:
Մեր լավաշ հացը մեր սրբությունն է,
Երդվել, երդվում ենք միշտ հացի առաջ**»:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կարող ենք ավելացնել, որ ինտեգրված դասի արդյունքում յուրաքանչյուր սովորող, ոչ ստիպողաբար, առաջադրանքներ է կատարում տանը, որոնք հետազոտում է, այնուհետև ներկայացնում դպրոցում, որը խրախուսվում է: Այս պարագայում սովորողին չես պարտադրում կատարել, նա այն կատարում է հաճույքով և ինքնակամ:

Հետագա աշխատանքային տարիների ընթացքում որոշել եմ ավելի շատ ներառել ինտեգրված դասերը դասապրոցեսի ընթացքում: